

ԼՈՒՅՍԱՆ ՀԱՅՈՑ ՇԱՐԺՈՒՅԹՆԵՐԸ

Ե. Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Լուսթյուն պահանջելու համար հնչյունական լեզվում գործածվում են զանազան բառեր և արտահայտություններ: Հիշենք գեթ մի մասը, որ ընդունված է մեր լեզվում՝ լռել, լռի՛ր, մի՛ խոսիր, սո՛ւս կաց, սո՛ւս մնա, ծա՛յնդ, ծպտուն չհանե՛ս, ծայն չհանե՛ս, ծայնդ կարի՛ր, ծայն չլսե՛մ, լուսթյուն, ո՛չ մի խոսք, ո՛չ մի ծայն. ինչպես նաև որոշ ծայնարկություններ՝ սսս, 222, սո՛ւսս... Թե դրանցից որը երբ է գործածվում, ինչ հնչերանգով, ծայնի ինչ սաստկությամբ, կախված է գործողության կատարման պայմաններից՝ միջավայրից, տիրող հոգեվիճակից, այն բանից՝ պահանջը մեկ հոգու է ուղղված, թե մեկից ավելի և այլն: Բայց լուսթյունը հենց ցանկալի է հաստատել այնպես, որ պահանջն ինքնին չխանգարի, ներգործուն լինի, կատարվի անմիջապես, առանց ձգձգումների: Թեև ինչ-ինչ դեպքերում հնչյունական լեզուն կարող է բավարարել նշված հանգամանքները, սակայն ավելի նպատակահարմար է շարժատությունը (ժեստիկուլյացիա). լուսթյուն պահանջելու համար դիմում ենք համապատասխան շարժույթների:

Անկասկած, այստեղ ավելորդ է, թերևս հնարավոր էլ չէ, միառմի թվարկել այն բոլոր շարժառիթներն ու իրավիճակները, երբ լուսթյուն է պահանջվում: Սակայն ընդհանուր պատկերի համար հինգ խումբ կհիշատակենք. ա. անզգուշություն է խոսելը (վտանգավոր վիճակ, որս, երբ մեկը հիվանդ կամ քնած է), բ. արգելված է խոսելը (ծայնագրման ստուդիաներում, կալանավորների և կողմնակի մարդկանց միջև), գ. անցանկալի է հաղորդակցի ասելիքը, որը պետք է ընդհատել, դ. պահանջվում է լուսթյուն, որևէ այլ բան լսելու համար, ե. ես լում եմ, ես ոչ մի ծայն չեմ հանում:

Գործողության սաստկությունը կամ մեղմությունը, իրավիճակները հիմնապատճառ են դարձել, որպեսզի շարժատությամբ ևս տարբեր եղանակներով, ուրեմն՝ տարբեր շարժույթներով լուսթյուն պահանջվի: Ըստ որում, դրանք նույնպես շատ հաճախ զուգակցվում են լռեցման ծայնարկություններով՝ սսս, 222, սո՛ւսս...

Քննությունը ցույց է տալիս, որ լռեցման հոմանիշային շարքը ակնհայտորեն կարող ենք բաժանել երկու ենթաշարքի: Մի ենթաշարքի շարժույթները կատարելիս տեղի է ունենում հաղորդակիցների անմիջական, ֆիզիկական շփում, մյուսի դեպքում՝ նրանք լինում են միմյանցից որոշակի տարածության վրա: Հետևենք այս տարանջատմանը և ենթաշարքերի վրա կանգ առնենք առանձին-առանձին:

1. **Անմիջական շփման շարժույթներ:** Հաղորդակցվողներից մեկը ձեռքով կամ մատներով ներգործում է մյուսի որոշակի մարմնամասերի վրա: Ըստ այդմ էլ առաջ են եկել տարբեր շարժույթներ: Վերջիններիս կատարման համար, այսպիսով, անհրաժեշտ է առնվազն երկու անձ:

Ինչ ասել կուզի, որ լուսթյան հասնելու նախնական, այդ պատճառով էլ կոպիտ, միջոցներից մեկն է եղել՝ հնարավորություն չտալ դիմացինին ծայն հանելու՝ ձեռքով փակելով նրա բերանը: Բնական է, որ ուժի գործադրման այս եղանակը պիտի տեղափոխվեր շարժատություն, կրեր բովանդակային ու կատարման տեխնիկայի ձևափոխություններ, վերածվեր լռեցման շարժույթի: Որպես այդպիսին, այն մեղմ է. ափը մի վայրկյանով հպվում կամ թեթևակի սեղմվում է հաղորդակցի բերանին: Ֆիզիկական ազատ շփումն, ընդհանրապես, ենթադրում է բարեկամական հարաբերություններ. սա ենթաշարքի, բայց հատկապես ներկա շարժույթի ծագման հետ ընդհանրություն ունեցող նաև հաջորդ երկու շարժույթի էական պայմանն է: Հակառակ դեպքում ձեռքով մեկի բերանը փակելը կդիտվի իբրև անքաղաքա-

վարություն: «Մեկի բերանը փակել» շարժույթը հարյուրից ավելի կայուն բառակապակցություններով արտացոլված է հայոց հնչյունական լեզվում: «Որոշել էր այնպիսի մի գաղտնիք հայտնել, որ ոչ երկինքը իմանար, ոչ երկիրը... - Օ, կանա՛յք, կանա՛յք... Շիրազը **փակեց բերանս**, - Մուս, ասացի չէ՞, ոչ որ» (Արամ Գրիգորյան): Այստեղ մենք ունենք բառակապակցական պարզ ձևերից մեկը՝ հարանդիր՝ կազմված «բերան» գոյականային գերակա անդամից ու բայից: Այս հարանդիրը ներառող ավելի ընդարձակ կառույցներում գումարվում են՝ ափ, ձեռք, մատներ գոյականային բաղադրիչները՝ դրված գործիական հոլովով, իսկ «փակել»-ը փոխարինվում է նաև գոցել, ծածկել, կալել բայերից որևէ մեկով: «Սիրական.- Տիկին... Անթառամ կին.- **(Ափով ծածկում է Սիրականի բերանը)**: Լռեք, ոչինչ մի ասեք, այսպես ավելի լավ է» (Գր. Տեր-Գրիգորյան): «Լռե՛, անշնորհք, ըսավ կեղծ խնդվածքով մը տիկին Նոյեմին **ձեռքովը Չարուհին բերանը գոցելով**... Ահ, Հակոբիկ, Չարուհին միշտ նույն անգուսպն է» (Ջ. Եսայան): «**Գիզո**, Պատրաստվում է պատմելու: Այ, Պեպան ջան, վունց էր... Կակուլի, **Գիզոյի բերանը ձեռքով ծածկում է**: Մու, սու, դուն սուս, Գիքո ջան...» (Գ. Մունդուկյան): «Ուզեց գոռալ կնոջ վրա, սակայն կինը իր **մատներով ծածկեց նրա բերանը**.- դու սուս, դու լսիր միայն...» (Ս. Խանգաղյան): Պետք է նշել, որ գործածության հաճախականության առումով աչքի է զարնում «ձեռքով մեկի բերանը փակել» կառույցային տարբերակը, թե՛ շարժույթի միանգամ (մեկ ձեռքով), թե՛ երկանգամ (երկու ձեռքով) կատարման դեպքում: «Փարվում էր իմ կրծքին, և երբ ես ուզում էի խոսել, **ձախ ձեռքով փակում էր բերանս**, կարծես ասելով, որ չխանգարեմ իր բերկրանքը վայելելու» (Վ. Վաղարշյան): «Իմ սիրտը, շշնջաց Եվան,- նախանձում է քեզ: Աշխենը **ձեռքով արագ փակեց նրա բերանը**, - Անմիտ, այդ ի՞նչ ես ասում» (Նար-Դոս): «Մարգարիտ, ազատիր ինձ իմ ծանր խոստումից: Բայց նա **երկու ձեռքով փակեց բերանս**:- Մուս, սուս, իմ ընկեր... Այս վերջին խենթությունն է, որ ես կատարում եմ քեզ համար» (Ավ. Ահարոնյան):

Կայուն բառակապակցությունների մի մասում «բերան» անդամի փոխարեն հանդես են գալիս շուրթեր (շրթներ), շրթունքներ բաղադրիչները, կազմվում են բառակապակցական ուրիշ զուգորդություններ, որոնք հավաք կարելի է արտահայտել հետևյալ կերպ՝ ափով (ձեռքով, մատներով) մեկի շուրթերը (շրթները, շրթունքները) փակել (ծածկել, գոցել, կալել): Ինչպես. «Բարսեղ քեռին երգեց. Աղջի... դռներդ մի բանա...»: - Անոթի եմ... - Մանուկը **ձեռքով ծածկեց պապի շուրթերը**» (Մ. Գալշոյան):

Արտացոլող բառակապակցությունների մի 3-րդ մասի կառուցվածքը բոլորովին այլ է: Դրանցում բերան, շուրթեր, շրթներ, շրթունքներ բաղադրիչները դրված են տրական հոլովով («վրա» կապով կամ առանց վերջինիս), ափ, ձեռք, մատներ բաղադրիչները՝ ուղղական հոլովով. այստեղ ունենք դնել, հպել, սեղմել, տանել, նաև երբեմն հանդես եկող մերծիմաստ մի քանի այլ բայեր: Այս կերպ մեր լեզվում կան քառասունից ավելի բաղադրիչային զուգորդություններ՝ ձեռքը մեկի բերանին դնել, ափը մեկի շրթներին սեղմել, մատները մեկի շրթունքներին հպել և այլն: «Արիկ չի թողուր, որ խոսքս լրացնեմ; **ձեռքը բերանիս վրա կդնե**» (Հ. Ասատուրյան): «Էդպես խոսքերով իմ սիրտս արին եք կաթացնում... - **Ձեռքը մեկի և մյուսի բերանին սեղմում էր Հերիքնազը**, - դուք ձեռք բախտին կտիրանաք» (Պ. Պռոշյան): «Լսվեցին կրակոցի ձայներ: Գառոյի Պետրոսը **ձեռքը մեր բերաններին տարավ**... - Ձեն չհանեք...» (Բ. Թովիկ): «... Գուցե և ինքնասպան լինեի... - Բավ է, - **մատները Մայրիկ շուրթերին հպեց** Հասմիկը» (Բ. Վերդյան): «Խնդրում եմ շարունակիր... Սողոմոնը **ձեռքը դրեց նրա շուրթերին**: Այդ Վարագա՛ վանքի զանգերն էին, և պետք էր լսել» (նույնը):

«Ձեռքով մեկի բերանը փակել» շարժանքը ավելի ուշ մասնակիորեն համառոտվեց: Առաջ եկավ մեկ ուրիշ շարժույթ, երբ այլևս լռեցնելու համար պարտադիր չէր գործադրել ձեռքի ամբողջ ափը, ինչպես տեսանք, երբեմն սեղմելով՝ ծածկել հաղորդակցի բերանը: Այժմ բավական էր մատը (ցուցամատը) դնել հաղորդակցի շրթունքների վրա, 2-րդ տարբերակում՝ միայն շրթունքին: Ներկայումս երկու շարժույթները գոյակցում են, առաջինը՝ ավելի սաստկական, ներգործուն, երկրորդը՝ մեղմ լինելու պարագայում: «Մատը մեկի բերանին դնել» շարժանքի՝ հնչյունական լեզվում արտահայտման պատկերը հար և նման է նախորդի արտացոլմանը: Միայն այժմ կառույցներում գերակա են «մատ» կամ «ցուցամատ» գոյականային անդամները դարձյալ ուղղական կամ գործիական հոլովներով: Բայերից չենք հանդիպել գոցել, ծածկել, կալել բաղադրիչներին: Առաջին տարբերակում մատը դրվում է երկու շրթունքներին: Օրինակներ. «Հայկուշը ինձ ներս է տանում ետևի դռնից, փակում դուռը, մա-

աղ դնում է բերանիս՝ զգուշացնելով, որ չխոսեմ» (Հ. Սկրտչյան): «Լավ: Բայց մի քիչ հանգստանամ, շոգը... - Ոչ, ոչ, սիրելիս, կգաս հետո,- և նա մատը քնքուշ շարժումով դրեց Գաբեղի մի շուրթերին.- ոչ մի խոսք...» (Էդ. Ավագյան): «Անիկ,- ... - զարմացած բացականչում է Գնեվը,- չլինի՞ր՞ թե... Անիկը մոտենում և մատը դնում է Գնեվի շրթունքներին:- սսս...» (Մ. Հարությունյան):

Այժմ ծագումով ձեռքով մեկի բերանը փակելու հետ առնչվող երրորդ շարժույթի մասին: Որոշակի առիթներով խոսողն այնպիսի մտքեր է արտահայտում, որոնց պատճառով հաղորդակիցը թեթևակի բարկանում է, նախատում նրան: Այդ բացասական վերաբերմունքն ի հայտ է գալիս նաև լռեցման շարժանիքյան մեջ: Լռեցնողը ափով (ձեռքով) թեթևակի խփում է խոսողի բերանին: Այն կիսակատակային շարժանքն անհամեմատ պակաս է գործածվում և հնչյունական լեզվում էլ քիչ է արտացոլված: «Խփել» բայից բացի հանդես են գալիս նաև նրա մերձիմաստը, հոմանիշները՝ հարվածել, զարկել, քփփահացնել, շրմփացնել՝ որևէ պարզաբանող բաղադրիչի հետ՝ թեթևակի, կամաց, կամացուկ, թեթև... օրինակ. «Երբ Լուսիկը կռացած զննում էր նրան, շշուկով խնդրեց.- Հնարավոր չէ՞ այնպես անել, որ ինքն էլ չծնված երեխան էլ... Լուսիկը ափով թեթևակի խփեց նրա բերանին.- Ինչեսա, բժիշկները մարդկանց փրկելու համար են» (Ա. Ստեփանյան):

Ենթաշարքի մյուս խումբը՝ բաղկացած երեք շարժույթից, այլ ծագում ունի: Լռեցումը պահանջվում է ոչ թե բերանին, այլ տարբեր եղանակներով ուրիշ մարմնամասերի վրա ներգործելով: Առաջինը շարժանք է և ունի երեք տարբերակ: Մի դեպքում լռեցնողը ափով (ձեռքով) դիպչում կամ թեթևակի խփում (զարկում, հարվածում) է հաղորդակցի ձեռքին, քսից, ուսից, կրծքին կամ էլ, նստած դիրքում (եթե մտերմության աստիճանը թույլ է տալիս)՝ ազդրին: Մեկ այլ դեպքում մատների ծայրով թփփացնում է (տպտպացնում, մի քանի անգամ թեթևակի խփում) է վերոհիշյալ մարմնամասերին. և մի երրորդ դեպքում՝ մեկ մատով թխկթխկացնում (տկտկացնում) է խոսողի մույն մարմնամասերին: Շարժույթի ներկա իմաստին նախորդել է և ս երկու իմաստ. 1. մեկի ուշադրությունը իր կողմը գրավել: 2. Դիմել մեկին: Այստեղից անցում է կատարվել լռեցմանը: Առօրյայում հաճախ հանդիպող շարժույթ է, ներկա իմաստով հատկապես վեճերի, տաք խոսակցությունների ժամանակ դիմացինին ընդհատելու, սեփական փաստերը բերելու համար:

Խմբի մյուս երկու շարժույթները կեցվածքներ են: Լռեցնելու համար մեկի դեպքում շարժասողն ափը (ձեռքը) դնում է խոսակցի ծնկին: Արտացոլող բառակապակցություններում, որոնք շատ չեն, հանդիպում է նաև «ծնկան» բառաձևը: «Եթե հավատում ես, որ հայկական գործը Կարսում իրոք պարտվեց, հավատա նաև դրան,- ասաց Արշակը: Եփրեմը ձեռքը դրեց Արշակի ծնկանը, ի նշան խոսք վերցնելու, ասաց.- Եթե մայիսյան ապստամբությունը հաղթանակե՞ր...» (Չ. Խալափյան): Մյուս դեպքում շարժասողը ափը (ձեռքը) դնում է խոսակցի ձեռքի երեսին: Արտացոլող բառակապակցություններում, որոնք դարձյալ շատ չեն, կա կառույցի մեկ այլ տիպ ևս՝ «ափով մեկի ձեռքը ծածկել»: «Ի՞նչը, Օհանես, ինչի՞ մասին ես հարցնում: Նվարդը փոքրիկ, ջերմիկ ձեռքը դրե՞ց նրա՞ տիկին Ռուկո չորուկ ձեռքի վրա, հասկացնելով, որ նա համբերի, ինքը կխոսի հիվանդի հետ: - Կույի մասի՞ն եք հարցնում, պարոն Ամիրյան,- հարցում արավ նա մեղմ եղանակով...» (Ստ. Ջորյան):

2. Առանց անմիջական շփման շարժույթներ: Սույն հոմանիշային ենթաշարքի շարժույթները կատարվում են հաղորդակիցների միջև եղած որոշակի հեռավորությունից: Շարժասողը չի ներգործում որևէ մեկի մարմնամասերի վրա: Եթե նախորդ ենթաշարքի դեպքում լռեցման պահանջն առնչվում էր միայն երկու հաղորդակիցների հետ, ապա այժմ վերաբերում է երկուսից ավելի մարդկանց, մույնիսկ՝ ամբողջ բազմության: Շարժույթները հինգն են, որոնցից երեքը դարձյալ առնչվում է «բերան» մարմնամասի հետ, այս անգամ՝ սեփական: Առաջացումն ակնհայտորեն նորից կապվում է լռեցնելու համար ստիպողաբար ձեռքով մեկի բերանը փակելու գործողության հետ: Ավելի ուշ ժամանակի արդյունք են. որոշակի ժամանակամիջոց էր պետք, որպեսզի ուրիշի վրա ներգործելուց անցում տեղի ունենար սեփական անձին, և մույնաման շարժույթը մույնիմաստ ընկալվեր: Այս կերպ ընդհանուր ծագման նախորդ խմբի «ձեռքով մեկի բերանը փակել», «մատը մեկի բերանին դնել», «ձեռքով մեկի բերանին խփել» շարժույթների դիմաց ներկա խումբը կազմում են՝ «ձեռքով իր բերանը փակել», «մատն իր բերանին դնել», «ձեռքով իր բերանին մի քանի անգամ խփել» շարժանքները:

Առաջինը կատարելիս շարժատողը կարճ տևողությամբ ձեռքը սեղմում, հպում կամ կիպ մտտեցնում է սեփական բերանին: Ընդհանրություններ ունենալու հանգամանքը պայմանավորում է վերոհիշյալ խմբերի արտացոլման մնացորդները հնչյունական լեզվում. բառակապակցություններում, փոփոխությունների կողքին, հանդես են գալիս նաև արդեն ծանոթ բաղադրիչներ՝ ծանոթ շարադասությամբ ու նույնպիսի հոլովառությամբ: «Բերանը գոցել (ծածկել, փակել, կալել) հարադիրներից բացի, այժմ ունենք «բերանը բռնել»: Օրինակ. «Կանչում է և աշխատասենյակի կողմը նայելով՝ **բերանը բռնում**»:- Սըսս: Կարծիք կաղջիկը ցավակցանքով շջջջում է. - Տանը հիվանդ կա» (Ա. Ստեփանյան): Եթե կառույցների մի մասն առանց դերանվանական բաղադրիչների է, ապա մյուս մասը, ի տարբերություն նախորդ խմբի, «մեկի» բաղադրիչի փոխարեն «իր» դերանունն է: «**Գիքո**, օթախի դռները կոխպիլ էրիտ, մնացինք յիս ու օղորմած հոքին: **Շուշան**, տխուր,- Միտս է: **Գիզո, ձեռքով իր բերանը ծածկելով**, Մուլախ...» (Գ. Սունդուկյան): «Աշտը **ձեռքն իր բերանին դնելով՝** շարունակ լուռ մնալու նշան էր ապիս» (Վ. Անանյան): Եկատելի է, որ այժմ հաճախ կառույցներից շատերում են հանդես գալիս սեղմել, տանել բայական անդամները: «**Շուշան**,- Խոսեցնեն՝ կխոսեն, չեն խոսեցնի, ըրը (**ձեռքով սեղմում է շուրթերը**): **Շմալուն**,- Խոսիր, ի՞նչ նորություն կա» (Ժ. Հարությունյան): «Որսաց բռան գարմացած հայացքն ու **մատները շրթներին սեղմած** հրամայեց,- Սուս...» (Ռ. Հովսեփյան): «Անհամբերությունից մեկը փորձեց հարցնել, թե ո՞վ արած կլինի: Ինչի՞ համար: Բոլորը **ձեռքները բերաններին տարան** ու միասին էլ շջջջացին,- Սուս...» (Էդ. Ավագյան): «Ուրեմն սիրտը պիտի հիվանդանա, որ նո՞ր միայն ուշադրություն դարձնեն: Ավագը **մատները տանում է դեպի բերանը ու փակում**... Շազան լուռ է» (Ս. Այվազյան): «Պառավի ձեռքերը ջրի մեջ են:- Այդ ի՞նչ էս անում,- հարցնում է տղան: Պառավը **ձեռքը շուրթերին է տանում**,- Սուս... - շջջջում է նա,- սուս, սուս...» (Ա. Զալանթարյան): Սակայն ընդհանուր առմամբ խոսքի մեջ գործածության հաճախականության տեսակետից աչքի են զարմում այն կառույցները, որոնց մեջ ավի, ձեռք, մատներ բաղադրիչներն են՝ դրված ուղղական հոլովով, և «դնել» բայը: Օրինակներ. «Բեռնիկը խորամանկ էր... **Ափը բերանին դնելով** հասկացրեց, որ երեխաները լուռ մնան» (Վ. Գրիգորյան): «Ներս է մտնում ծերունին.- Արթո՞ւն է,- հարցնում է նա շջջջյունով: Այրին, **ձեռքը դնելով բերանին**, զգուշացնում է, որ նա չխոսի: Հիվանդը բնած է» (Շիրվանզադե): «Գուցե չե՞ն իմանում, որ եկել ենք,- ասացի: - Սըսս,- շջջջաց Գարեգինը, **ձեռքը շրթուքներին դնելով** և ականջները խլշեց» (Նար-Գոս): «Հարսները գարմացած նայեցին Հաճուն, բայց Հաճի մարը գողունի **մատները դրեց շրթուքներին**, որ չխոսեն» (Գ. Գեմիրճյան):

Իր վրա ներգործելու սույն խմբի մյուս շարժույթն է, ինչպես ասացինք, «մատն իր բերանին դնել»: Շարժատողը ցուցամատը կողքի մատով դնում է բերանի մեջտեղին՝ բութ մատը դեպի շրթուքները, մյուս մատները ծալվում են: Շրթուքները սեղմված են, հաճախ դեպի առաջ ձգված: Հնչյունական լեզվում արտացոլման պատկերն այժմ էլ ընդհանրություններ ունի «մատը մեկի բերանին դնել» շարժույթի արտացոլման հետ: Կառույցներում «մեկի» բաղադրիչին այստեղ փոխարինում է «իր» դերանունը: Կան նաև նոր կառույցներ՝ այլ բայական անդամներով՝ մատը շրթուքներին խաչել, մատով շրթուքները խաչել, մատով շուրթերը կիսել, մատով սրու ասել, ցուցամատը շրթուքներին բարձրանալ: Ինչպես. «Սալվին բացեց աչքերը.- Զա, ի՞նչ է եղել: Սուս,- ամուսինը **մատով խաչեց շրթուքները**,- հըը ալկանջ էր» (Վ. Տալյան): «Արաքսին ունկնդրում էր ներսից լավող երգը: Աղջի,- կանչեց մայրը.- Սուս, մա ջան,- շջջջաց Արաքսին ու բարալիկ **մատով կիսեց շուրթերը**» (Ույունը): «Մատով ու շուկով իրեն ասում էին՝ սուս: Տղան գնաց կասկածելով... Իսկ նրանք անձայն հրճվում ու **մատով ասում էին՝ սուս**» (Հ. Մաքևոսյան): Իսկ ընդհանուր առմամբ կառույցների մնացորդները գալիս է նույն մատ, ցուցամատ, բերան, շրթուք, շուրթ, դնել, տանել բաղադրիչների զուգորդություններից: Եթե «մատը մեկի բերանին դնել» շարժույթի արտացոլման գոյակամային անդամները կարող էին ունենալ տարբեր հոդեր, ապա այժմ յուրաքանչյուր կառույցում լինում են նույն, ս, դ, ը (ն) հոդերը: «Գևորգ Չառուը **մատը դրեց բերանին**, որ նշանակում էր, թե լոիր: ... Եվ են լռեցի» (Խ. Գալստեմ): «Կարենը նկատում է ու հարցական նայում: **Մատն տանում են բերանս**, որ լոիր ու սուսուփուս դուրս գա» (Պ. Ջեթունցյան): Ապա նաև. «Գասպար (ցածրածայն),- Հովիկը էս կողմերում ֆոֆոում է: Աղամյան (**մատը շրթուքին դնելով**),- 222...» (Ժ. Հարությունյան): «Այնպես էր ծպտվել... Հազիվ էի բերանս բացել՝ անունը տայի, **մատը շրթներին տարավ**, նշան արեց, հետը չխոսեմ» (Ա.Լ.Ուն Զավեն

Մտրմեյան): «Զարմանքից դույլը ընկավ ձեռքիցս: Չմրուխտը սակայն իրեն չկորցրեց. **ցուցամատը անմիջապես դրեց շորքերին**, որ ձայն չհանեն» (Վ. Գրիգորյան): «Գրիգոր ու Մարգար **ցուցամատերը շրթներուն կտանեն**, ըսելու համար, որ չխոսի Մարթա: Մարթա կհասկնա, կկենա լուռ» (Համաստեղ):

«Բերան» մարմնամասի հետ առնչվող վերջին շարժույթն է՝ «ձեռքի ափով իր բերանին խփել»։ Ներգործման առումով հակադրությունն արդեն հիշատակված «ձեռքով մեկի բերանին խփել» շարժանքի: Լեզվում արտացոլող սակավ բառակապակցություններ կան: Մյուսներից են՝ ձեռքով իր բերանին խփել, մատներով իր բերանին խփել, ձեռքով (մատներով) իր շրթունքները տպտպացնել: Ինչպես օրինակ. «Միմասն **աչ ձեռքի մատներով մի քանի անգամ տպտպացրեց շրթունքները**, ասես ինքն իր ձեռքն էր համբուրում, իսկ ձախ ձեռքը մեկնեց դեպի հեռուն՝ դեպի անտառը: Նա լռեցնում էր երեխաներին ու աչքով ակնարկում էր Թթու ջրի ծմակը» (Վ. Տալյան):

Որոշակի տարածությունից կատարվող, բերանի հետ չառնչվող երկու շարժույթ ունենք՝ «ծափ տալ» և «ձեռքը բարձրացնել»: «Ծափ տալ» շարժանքը շարժատողը կատարում է շատ մարդկանց դիմելիս, աղմկողների միջավայրում: Ծափն ինքնին աղմկահարույց լինելով՝ հակադրվում է ուրիշ ձայներին: Գործնականում հարմար է խմբավարներին կամ մկագավորներին՝ երգչախումբը կամ մկագախումբը լռեցնելու, կատարումը դադարեցնելու համար, խոսողին՝ հավաքվածներին դիմելուց առաջ և այլն: Լռության պահանջի իմաստով այս շարժանքը թերևս ամենից քիչ է գործածվում: Առօրյայում անհամեմատ հաճախ գործածական են նրա մի քանի այլ իմաստներ, որոնցից են. 1. մեղեդու կշռույթը պահել, 2. ուրախանալ, 3. գովել խրախուսել: Այս պատճառով ներկա իմաստով շարժույթը լեզվում արտացոլված է միայն մի քանի բառային միավորներով՝ «ծափ», «ծափ տալ», «ծափ զարկել»: Ինչպես. «Չիմացաք... - լռություն ազդարարող ծափով անաց ընկեր Մարությանը,- դե ուրեմն լսեցեք: Մենք սրեցինք մեր լսողությունը» (Հովհ. Գուկասյան):

Այլ է «ձեռքը բարձրացնել» շարժույթը: Այն առօրեական է, գործածության մեծ հաճախականություն ունի, կատարվում է սաստկության թույլ և ուժեղ աստիճաններով: Ծարժատողը, թեև արմունկից ծալելով, բարձրացնում է կրծքի մակարդակին՝ ափն ուղղելով դեպի առաջ: Սա կատարման թույլ աստիճանն է: Ուժեղ աստիճանում՝ առավել ներգործման համար կամ հաղորդակիցներից համեմատաբար մեծ տարածության վրա լինելիս, շարժատողը ձեռքը բարձրացնում է գլխի մակարդակին: Սաստկության աստիճանները կարող են արտահայտվել նաև երկանդան կատարմամբ. թույլ աստիճանում բարձրացնում է մեկ, ուժեղի դեպքում՝ երկու ձեռքը:

Գործածության մեծ հաճախականությանը համապատասխան բազմազան է լեզվական արտացոլումը: Նախ, ամենից ավելի, տարածված է «ձեռքը բարձրացնել» հարադիրը, իբրև շարժանքի պարզ, մկարագրական անվանում. լինում է նաև «վեր» բաղադրիչով: Օրինակներ. «Բայց Անդրանիկը չթողեց, որ նա շարունակի իր խոսքը: **Ձեռքը բարձրացրեց**, որ լռի և արհամարհանքով ասաց...» (Խ. Դաշտենց): «Գլուղացիները շրջապատեցին Թումանյանին և սկսեցին խառնածայն խոսել, զանգատվել. Թումանյանը լսեց մի փոքր, ասպա **ձեռքը բարձրացրեց**, որ լռեն...» (Մտ. Չորյան): «Ամեն կողմից հարցերի տարափ տեղացին Ունանի գլխին: Ունանը **ձեռքը վեր բարձրացրեց**, նշան տալով, որ լռեն: Դամփա տվեք...» (Մ. Դարբինյան): Ձեռքի շարժումը դեպի վեր նշվում է նաև պարզել, տնկել բայերով: Որոշ կառույցներ կազմված են շարժանքի կատարման նպատակի հիման վրա, որ նշվում է բայական համապատասխան բաղադրիչներով: Վերջիններից են՝ լռել՝ ձեռքի նշանով լռեցնել, ձեռքով լռելու նշան անել: «Դուրս է գալիս բարձրահասակ, պատկառելի արտաքինով մի մարդ.... նա **ձեռքով լռելու նշան է անում**, դիմում է ժողովրդին... - Հանգստացեք, հայրենակիցներ...» (Հ. Մկրտչյան): Խոսքին միջամտելը ցույց են տալիս՝ կանգնեցնել, ընդհատել բայերը: «Հետո Մանեն արագ անցավ իր հարցաթերթիկին, որպեսզի չընդհատեն իրեն: - Ո՞ր դպրոցն ես ավարտել,- **ձեռքի շարժումով կանգնեցրեց** քննողը: - Աշտտավանի» (Ա. Մեկոյան): «Կոմբինատի դիրեկտորը ծիծաղեց.- Իսկ եթե... Մամյանը **բարձրացրած ձեռքով ընդհատեց նրան**.- Ես ասացի, որ միայն փաստերով եմ առաջնորդվում» (Ա. Բալանթարյան): «Մենության խավար զնգանից կրկին.... սկսեց Պետիկը: Ծողկըր **ձեռքով ընդհատեց**.- Բո գրածը կարդա, լսել եմ՝ նոր պոեմ ես գրել» (Ա. Ստեփանյան):

Եվ այսպես, մենք քննության առանք լոեցման շարժասական հոմանիշային շարքը՝ բաղկացած 11 շարժույթից: Ստորև բերում ենք դրանց ցանկը:

Առաջին ենթաշարք. կատարվում է հաղորդակցի վրա անմիջական ներգործմամբ: «ափով մեկի բերանը փակել», «մատը մեկի շրթունքներին դնել», «ձեռքով թեթևակի մեկի բերանին խփել», «ձեռքով (մատների ծայրով) դիպել կամ մի քանի անգամ թեթևակի խփել մեկի թևին, կրծքին կամ ազդրին», «ափը մեկի ծնկին դնել», «ափը մեկի ձեռքին դնել»:

Երկրորդ ենթաշարք. կատարվում է առանց հաղորդակցի վրա անմիջական ներգործման. «ափն իր բերանին դնել», «մատն իր շրթունքներին դնել», «ափով (մատների ծայրով) մի քանի անգամ թեթևակի իր բերանին խփել», «ծափ տալ», «ձեռքը բարձրացնել»:

Е. У. ГЕВОРКЯН - Требующие молчания кинемы в армянском языке. - В определенных условиях, для требования молчания, вместе с вербальным языком или без него используются определенные жестиколяционные средства, например, когда вообще запрещено говорить или необходимо говорить тихо, или необходимо прервать говорящего, или дать понять, что информацию нельзя распространять и т. п. В зависимости от того, строгое или мягкое требование молчания, направлено оно одному человеку или нескольким, в зависимости от эмоционального состояния запрещающего и т. д. используются разные кинемы, составляющие жестиколяционный синонимический ряд. Анализ этого ряда показывает, что его составляют две группы кинем, одна из которых предполагает непосредственное физическое общение между коммуникантами: один из коммуникантов ладонью, кончиками пальцев или указательным пальцем воздействует на определенные части тела другого (колени, кисть руки, руку, рот). При выполнении кинем другого ряда между коммуникантами физического общения не происходит, жестиколирующий ладонью или пальцами прикасается к своему рту, или использует кинемы других типов: поднимает руку, хлопает в ладоши.

В статье рассматриваются также слова и словосочетания, с помощью которых упомянутые кинемы находят свое отражение в вербальном языке.